



64. ԼԱՆԳԱՌԻ ԽԵՔԱԹ

Մեկ թաքավոր կեղներ: Թաքավորուն քննսուն տղա կեղներ:

Թաքավորու ճուղ տղեն գլննց մոտ թաքավոր, ասաց. - Մինք քննսուն ախպեր էկեր ինք իիռճիվ փսակվելու:

Թաքավոր ուր տղին ըսաց. - Արի՛, նըստի՛ թախթ:

Ճուղ տղեն՝ Լանգան, նըստավ թախթ:

Թաքավոր ու լալեն թանղիի եղան, էլան, քնցին մեկ հուրիշ գյեղըմ, քնցին մեկի տուն նըստան, թաքավոր ասաց. - Ձի քննսուն տղա կա, ձեզի էլ քննսուն ախչիկ կա՞, տղվե՛ք իմ տղեքներուն:

Տանտերն ըսաց. - Դու վո՞վ ես:

Ասաց. - Ես թաքավոր, ես ա իմ լալեն:

Ասաց. - Թաքավոր՝ ապրած կենա, ձի քննսուն ախչիկ ունիմ, դանցի՛ քու քնդաքյ, քու թաղթի՛ր տիսի, արի՛, քու խարսներ տա՛ր:

Թաքավոր դառցավ, հետ էկավ, տղին ըսաց. - Ես կերթամ՝ խարսներ պերիմ:

Տղեն ասաց. - Թաքավոր՝ ապրած կենա, ես էրթամ, պերիմ:

Թաքավորն ասաց. - Տու նըստի՛ թախթ, ես էրթամ, պերիմ:

Լանգանն ըսաց ուր խոր. - Օր կերթաս, հախպուրըմ կը գն քու իիռճիվ, էն տունեն օր կը տաննաս գնա, քու չանղըր էն հախպըրի վերեն չըզարկիս:

Թաքավոր առեց ուր վանգիր-նագիրներ, քուբարներ, էրկու թաբուռ ասքար, թուփ-ջանքըրիսանով գլննց, առավ ուր խարսներ, տանցավ, էկավ:

Վաճիրն էր գլընաց թաքավորի մոտ, ըսաց. - Մեր չաղըր էստեղ գանհինք, էս հախալորի վերեն:

Թաքավորն ըսաց. - Չէ՛, իմ տղեն ինձի շիրաթ էրե, օր էս հախալորի վերեն չաղըր չըգարկինք:

Ըսաց. - Թաքավոր ապրած, մա մեզի թոփ կա, ոջ կը տա վար մեզի, մարթ չըգըխշընա տա վար մըզի:

Չաղըրքյիր էնտեղ հախալորի վերեն գարկեցին: Մնաց չուր կեսքիշերին:

Վիշափըմ էրկնուց իճավ, չաղըրներու չորսպուլուր պըռնեց, գլըլոխ, պուչ էրաց մեկ:

Թաքավոր աքխավ, ասաց ուր թոփչուն. - Թոփով գա՛րկ:

Վիշափ ասաց. - Ծի հիրար չըտե՛ք, համեն կըսպանիմ, գլընա՛քիւ տըղա Լանգան ա՛ռ, պի՛ գիկ:

Թաքավոր ասաց էրկու մարթուն. - Քանց՛ք իմ տըղին՝ Լանգան, առե՛ք, պերե՛ք:

Մարթեր քանցին, առան, պերեցին: Օր քանցին, Լանգանին ըսիցին՝ էն հախալուր օր տա՛ւ կասեր, քիւ խեր ուր չաղըր էնտեղ գարկեր ա, վիշափըմ էկեր ա չաղըրքյերու չորսպուլուր պըռնիր ա, գլըլոխ, պուչ էրեր ա մեկ, քի՛ կուգա:

Լանգանն ըսաց. - Կանամ չէթամ, ամա անոց մեխքյ կընգնի իմ վիգ:

Էլավ էկավ, էկավ վիշափի մոտ: Վիշափ թալից, պըռնից գտըղին, առավ, տարավ, տարավ, իղիր մեկ սարի գլըլոխ:

Էնտեղեն տըղեն էլավ, գլընաց: Կէրթա մեկ տանտի մեչ, կը մըտի մեկ տան մեչ: Իրեք ախպեր կը պանժվին:

Կըսի. - Ընչի՞ խանար կը պանժվիք:

Կըսի. - Էն հապով կը պանժվինք, օր արտեր կիսիր ինք:

Մնացիր մեկ խացի սուֆրա:

Թաքավորի տըղեն ըսաց. - Սուֆրեն պերե՛ք, տըվե՛ք ընձի:

Սուֆրեն տըվըցին թաքավորի տըղին:

Ասաց. - Էն սուֆրեն միր մեկ ախպոր կը խասնի:

Էն ախպոր ըսաց. - Քո գորգ թա՛լ:

Իրեք ախպեր գորգ թալըցին:

Չուր քանցին, առան զգորգ էկան, թաքավորի տըղեն առավ սուֆրեն, գլընաց: Կէրթա մեկ դեվերու էրկիր:

- Տիւ յէլ թաքավորի տըղա իս, - ասիցին, - քի կուտինք:

- Ընծի մ'ո՛ւտեք: Հեծնութիւն կինգնի մա՛ ծի:

Էլան, չըկերան: Փետըմ՝ գա՛րգեցին վա՛ր սուֆրին, խարիր քիլա՛ ցուրին կերան: Յոթ տարվան զըխիրեն դեվեր տարան ուրինց խա՛մար:

Ասըցին դեվերու թաքավորին. - Ընցկուն հեծնութիւն եցկից մա՛չ մի, կոտ էտիր խինգյ փարա, մարթ չառնի:

- Քու ումուտ ի՞նչ ա, - դեվերու թաքավոր տըղին ասաց:

Լանգառեն ասաց. - Չի քու խուղուց խանիս:

Մեկ կողորշըմ խուլ մոտ: Էլավ, գըընաց: Գըընաց մեկ մըր-ջըմնիրու թաքավորու մոտ:

- Սով ինգիր ի մա՛չ մի:

- Չի մ'ո՛ւտեք, հեծնութիւն կեցկիմ մա՛չ ծի:

Փետ էգարկ վա՛ր սուֆրին: Խարիր քիլա՛ ցուրին, մըրջըմնիր կերան, յոթ տարվան զըխիրա տարան:

Ասաց. - Ի՞նչ կուզիս:

Ասաց. - Կուզիմ ծի քու խուղից խանիս:

Ասաց. - Ա՛ռ նա կըրշ մա՛ քի: Ինչ վախտ ընգիս նեղութեն, տաս՝ քի կը խասնիմ:

Էլավ, գըընաց: Գըընաց էն քոչկի հիռճիվ:

Ասաց ախչիկ. - Ես գյինամ՝ դու թաքավորական տըղա յես: Հատուց գա՛տնացի՛, գըընա՛: Չըգա՛տնանաս էրթաս, էրկու խոսք կը թալիմ քու հիռճիվ, էն էրկու խոսք չըխանիս, քու վիզ կը գա՛րկիմ:

Տարավ էտի մեկ տան մեչ: Պըղինծըմ գա՛տ իփից:

- Չուր խըլխու՛ն թի նա կերա՞ր, թաքավորու ախչիկ տանիս քի խա՛մար:

Չըկարցավ կերեր չուր կեսքիշերին, դեվերու կողորշ էտու կըրակ, դեվեր էլան, էկան մա՛ տըղեն:

Ասաց. - Ի՞նչ էնինք:

Ասաց. - Էնա գա՛տ կերե՛ք, քացե՛ք:

Էլան, քացին դեվեր, չուր պա՛րիլուս պացվավ:

Թաքավորի ախչիկ ըսաց Լանգառուն. - Քու խոսք խանը-ցիր: Մնաց մեկ խոսք, էն էլ խանըցիր, ախչիկ տանիս քի խա՛մար:

Էպի տաս քիլա՛ ցուրին, տաս քիլա՛ կորիկ խա՛ռնից հիրար:

- Չուր խըլխու՛ն թի տու՛ նա ըստըկիցիր, ախչիկ տամ քի:

Չըկարցավ ըստըկեր էր: Մըրջըմներու կըրշ էտու կըրակ:

Մըրջըմներ եկան, կորիկ կընար մ' ըստըկեցին, ցուրին՝
կընար'մ:

Ախչիկ առավ, տարավ, տարավ վիշափի մոտ:

Վիշափ ըսաց. - Իմ խեր անկում մարթ էր սպանի, անու մե-
ղաց իս էլեր էր վիշափըմ, էրկինքըն էր քացի: Էրկնուց իճա տակ,
իճա, նըստա մաչ տաշտին: Վար տու շոտ ախչիկ պիրիցիր, իմ
մեղաց թողութին էլավ:

Վիշափ ուր կաշուց լոպկըվավ, էլավ տըսվերկու տարեկան
ջըհեղիկըմ:

Ըսաց. - Էս ախչիկ, օր պերեցիր, իմ քուրն ա:

Ախչիկ էտու Լանգանին:

Լանգան առավ, տարավ ուր խամար:

